Հավելված N 2
ՀՀ կառավարության 2021 թվականի
հուլիսի 15-ի N 1139 - Լ որոշման

Կ Ա Ր Գ
ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՏԵՂԱՎՈՐՎԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿԱՑԱՐԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Միջոցառման չափանիշներին բավարարող շահառուները, աջակցությունից օգտվելու նպատակով, մինչև 2021 թվականի սեպտեմբերի 1-ը դիմում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)՝ լրացնելով էլեկտրոնային հայտով պահանջվող տեղեկատվությունը և կցելով հետևյալ փաստաթղթերը՝

1) ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գրանցման/հաշվառման վկայականը (առկայության դեպքում) և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից տրված քաղվածքը, որը կարող է ներբեռնվել էլեկտրոնային եղանակով.

2) հայտով ներկայացված ամբողջ տեղեկատվության հավաստիությունը հաստատող փաստաթուղթ:

2. Նախարարությունը շահառուների ընտրության նպատակով ստացված տեղեկատվության ստուգումը և համապատասխանությունը սույն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետով սահմանված ցանկին իրականացնում է հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: Թերությունների առկայության կամ մերժման դեպքում դրանց վերաբերյալ հայտատուին տեղեկացումը կատարվում է էլեկտրոնային եղանակով՝ նույն ժամկետում:

3. Հայտի թերությունները կարող են շտկվել այդ մասին հայտատուին տեղեկացնելուց հետո առավելագույնը 10 օրվա ընթացքում:

4. Նախարարությունը սույն հավելվածի 1-ին կետում թվարկված փաստաթղթերի փաթեթը հայտատուից ստանալուց, համապատասխանությունն ուսումնասիրելուց և շահառուների վերջնական ցանկը հաստատելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր դիմում է ՀՀ պետական եկամուտների կոմիտե՝ սույն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետով սահմանված՝ 2019 թվականի Կենտրոնական գանձապետական հաշվից իրականացված մարումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

5. Սույն հավելվածի 4-րդ կետով սահմանված տեղեկատվությունը ստանալուց հետո նախարարությունը 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտում լրացված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկում է ծանուցում՝ շահառու դառնալու վերաբերյալ: Ծանուցումն ուղարկվելուց հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում շահառուների հետ կնքվում է օժանդակության տրամադրման պայմանագիր, որից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում վճարում՝ շահառուի կողմից ներկայացված բանկային հաշվին փոխանցում իրականացնելու միջոցով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ